6. Եթէ մարդ սովորի օրական մի բաժակ չափ լոշտակ ուտել, ցաւ չի տեսնել մինչեւ մահը:

7. Եթէ եղունգը ընկնի եւ թարախ դնայ, լոշտակը ծեծիր, ճերմակ մհլամ շինիր վրան դիր. 10 օր մի մի դրամ խմիր:

8. Լոշտակը ճերմակ գինիով, վարդի իւղով ձեռքը օծի 5 անգամ. եթէ քոր տայ եւ կսկծայ լոշտակի ջուրն խմի ճերմակ գինիով 5 օր, կամ վրան կապիր քոր եկած տեղը:

9. Մարդի ոտը կամ ձեռը եթէ փուչ մանի կամ երկաթ, սումբուլի քոքը ծեծիր, վրան դիր, յետոյ քաշիր հանիր:

10. Բերանից ջուր գալուց մի գլուխ սխտոր ծեծիր քացախով խմիր ճիճուին կը սպանի:

11. Դդումի սերմը կլեպել, ուտել, անգլիական աղ խմել, եւ հում սոխ ուտել. ջուր չխմել ու հաց չուտել այդ օրը. երիզորդը կ'ընկնի:

12. Բերանի հոտի դէմ — վերցնել անիսոնը, բիբարը, գանջաբիլը, ծեծել, քացախում եփել բերանը առնել 3—4 օր շարունակել կամ գլխի դաղաթից արիւն առնել:

13. Բերանից ջուր գալուց իշու թրիքը տորոի քթի մէջ կաթեցու:

14. Մէզը կապուելուց դարին շատ եփի մինչեւ մհլամ դառնայ, ծածուկ անդամի վրայ դիր կամ քսիր:

15. Եթէ կինը կաթ չունենայ, բոդկը եփիր, տորոիր, ջուրը քամիր մեղրով խմիր, կաթ կը բերէ:

16. Եթէ սիրտը ցաւի, աղաջուրը լաւ եփիր, ոտները մէջը դիր:

17. Մարդ թէ մրսած լինի աղաջուրը եփիր եւ մի բուռ թեփ աղաջրի մէջ ձգիր, ոտները մէջը դիր. ջուրը հովանալուց կրկին տաքացնել եւ ոտը մէջը պահել 3 անգամ:

18. Թէ սրտումը թիքա եւ այլ բան լինի, ջուրը եփ տուր, մէջքի վրայ պառկեցուր մի շոր ձգիր կրծքին եւ տաք ջրով դաղանը դիր վրան, գլխատեղը բարձր լինի, փորը ցած:

19. Երեխայի քունը եթէ չտանի, խաշխաշի ձէթը քունքը քսի, կը քնի:

20. Ճիճուի դէմ սխտորը աղով ծեծել, քացախ խառնել եւ խմել: — Ծթորանը, կռատմի սերմը եւ չամանը եփել եւ խմացնել:

21. Այրուածքի համար տուղտի տերեւը ձէթով ծեծել վրան դնել: Սոսինձը հալել եւ ձեռով քսել: Ընկուզի իւղ են քսում. լեղակ կամ մեղը են քսում:

22. Կովի իւղով օծել: Հաւի ծիրտը իւղի հետ խառնած, այրուած տեղին քսելուց կսկծոցը մեղմացնում, բժշկում է: Լեղակ, ձէթ, հինա, ծամօն եփում են դնում վրան:

23. Որ շողինքը չկարենայ կուլ տալ, աղ ու մեղր խառնել, ուտել:

24. Եթէ լեզուն կապ է ընկնում չէ կարողանում խօսել աղբաղբուկը կամ նրա սերմը աղալ եւ մեղրի հետ խառնած բերանը ձգել:

25. Լոշտակի տերեւը ծեծել, ջրի մէջ գինի խառնած խմել երեսի դոյնը կլաւանայ:

26. Մաղասի դէմ բոդկը խորովի եւ կեր: — Սոխի ջուրը հանիր մեղր խառնած քիթը ածիր: — Դաղձը հացի հետ ուտել:

27. Շեռը կապուելուց վերցնում են 50 դրամ կտաւատ, աղում եւ ըռեզանի ջրի հետ խմացնում. իւղը թանի հետ ուտելն էլ օգնում է:

28. Ծաղկացաւից չմնասուելու համար անալի կարագ քսել:

29. Հիւանդին թթու, կծու կամ աղի բան չուտացնել:

30. Քրտնեցնելու համար մալինայի (մորի) թէյ խմացնել:

31. Ոտները տաք ջրի մէջ դնել:

32. Շիշերը տաք ջրով լցնել, դնել ոտքերի տակ անկողնի մէջ:

33. Ծննդկանի ցաւը մեղմացնելու համար ընկուզը իր կեղեւով այրում են փոշի դարձնում, գինու եւ ձէթի հետ խառն քսում գլխին:

34. Ցուրտ տարած տեղի վրայ հին բամբակը օղու մէջ եփել դնել վրան:

35. Քոսի դէմ մարգամիւշը եւ քացախը եփել, սառեցնել քսել մարմնին եւ երեկոյեան լողանալ. տաք, տեղ կամ թոնրի մէջ նստել:

36. Ոչիլի դէմ ջուան ջուր անել խինայով քսել մարմինը կամ չապիկը:

37. Մկնատամի համար բրինձը այրել երկաթի վրայ ու իւղը քսել:

38. Մառնաչունչ (թարախակալելուց) լինելուց, սոխը խորովել եւ դնել վրան: — — Ոչխարի դմակը ծեծել, մածնի ու սոխի հետ խառնել, եփել, դնել վրան:

39. Ձիու վէրքի վրայ դնում են արխամաշը այրած, մանր կրճած եւ վրայից բրդով ծածկում:

40. Որը կարուելուց տորոնը եփում են, վրան բրինձ ածում եւ դնում վէրքի վրայ:

41. Լուի դէմ եղան լեղին ու քակորը (աթթարը) քացախի մէջ խառնելով սրսկում են դոչակին:

42. Լուի դէմ վերցնում են սադափը, մատակ ձիու կաթի մէջ եփում սրսկում շորեղէնին:

43. Օձերը փախչում են չելիկի տերեւների հոտից, երբ դնում են շորեղէնի մէջ:

44. Վիժեցնելու համար բարձր տեղից թռչում են ցած:

45. — Փորի վրայ երկանք են դնում աղում:

46. — Ծանր բան են դնում փորին:

47. Ալաքլունդ մէջքաթը չորացնում են ծեծում, ջրով կամ գինիով խմացնում:

48. Ծննդկանի մէջքի վրայ մի հաց են ձեռով կիսում, աղքատին տալիս:

49. Տղամարդի գլխարկ են ծածկում, որ չարը խափանի, կարծի տղամարդ է նրանից հեռանայ:

50. Ծննդկան կնոջ ամուսնու տրեխի կրունկի մէջ ջուր են լցնում, շաղ տալիս կրծքին, որ արդանդը բացուի:

ՅԱԿՈԲ ԹՈԽԱԹԵՑԻՈՑ

ՈՂԲ Ի ՎԵՐԱՑ ԵՐԿՐԻՆ ՕԼԽԱՑ

Յակոբ երէց Թոխաթեցի ծանօթ է արդէն իւր կենսագրութեամբ եւ գրական երկերով[1]: Ապրած է երկարամեայ կեանք մը (1573—1680), մեծաւ մասամբ պանդխտութեան մէջ ի Զամոսցա Լեհաց աշխարհին:

Կը պակսէին մեզի տեղեկութիւններ իր բազմամեայ կեանքին առաջին երեսնամեակի մասին. այս պակասը կը լրացնէ այժմ մասամբ Ողբն ի վերայ Օլախաց երկրին, որ առաջին անգամ հրատարակ կու գայ Հանդէս Ամսօրեայիս էջերու մէջ: Կը յայտնուի այժմ թէ Յակոբ Թոխաթեցի 1593ին արդէն եղած էր իւր հայրենիքէն եւ կը պանդխտէր Մոլդաւիայի Եաշ քաղաքը, ուր տեղւոյն եպիսկոպոսը Յովհաննէս Կաֆացի ցոյց տուած է իրեն հայրական գորով եւ շնորհած չորս փոքր ատենաններ, որով եղած է Յակոբ «գրչիր»: Հաւանօրէն նոյն Յովհաննէս եպիսկոպոսէն ընդունած է Յակոբ նաեւ քահանայական ձեռնադրութիւնը 1595 թուականէն ոչ շատ ուշ:

1601/2ին, երբ Յովհաննէս Զամոսկի, Լեհաց սպարապետն եւ «քանցլէրը» հիմնարկեց իւր անուամբ Զամոսցա քաղաքը, նոր-բարգաւաց քաղաքին պարիսպները ընդունեցան իրենց ներսը նաեւ մեծաթիւ հայեր, որոնք ունեցան իրենց սեպհական եկեղեցին ալ: Կ'երեւայ թէ այս առթիւ հրաւիրուեցաւ նոր-ընծայ քահանայն Յակոբ Թոխաթեցի ըլլալու Զամոսցայի հայ գաղթականութեան հովիւ:

Վերոյիշեալ աշխատութեանս մէջ ամփոփած էի այն ամէն յիշատակարանները, որոնք կը խօսէին Յակոբ Թոխաթեցւոյ մասին: Թոյլ կու տամ ինձ կցել անոնց նաեւ հետեւեալները, որոնք վերջերս մատչելի եղան ինձ եւ կը նպաստեն լուսաւորելու Յակոբի կենսագրութիւնը.

1. Փառք ... Արդ գրեցաւ քրիստոսասիրին եւ առաքելազարդ հոգիաբուխ տառս կանոնական ի մայրաքաղաքն Իրով ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին ձեռամբ Զաքնօ ս(արկաւագ)ին ի թուականիս հայկազանունի ՌԾԱ. ամի... (ի) դատաւորութեանն Պարոն Իսան պէյին սորին իսկ ստացողի. որ մեծաւ ջանիւ... նախանձայոյզ եղեալ հայրենի յիշատակացն եգիտ զգաղափար սորա առ քահանայ մի Խաչատուր կոչեցեալ եւ ծանեաւ որ իւրոց նախնեացն էր եւ կամեցաւ առնուլ ի ձեռանէ նորա եւ տալ յիշատակ ի նորաշէն քաղաքն Զամոսցա ի յեկեղեցին սուրբ Աստուածածնին: Բայց տէր Խաչատուրն յոյժ դրասէր էր եւ առաւել եւս հին օրինակաց. վասն այն շատ աղաչեցեալ զպարոն Իսան պէյ դատաւորն եւ ետ գրել զսա փոխան նորա եւ ետ պարոն Իսան պէյին. վասն զի օրինակն նորա յոյժ ընտիր

[1] Հմմտ. Հ. Ն. Ակինեան՝ Յակոբ երէց Թոխաթեցի. Հանդէս Ամսօրեայ, 1921, էջ 273—285, 374—385, 472—485 = Հինգ պանդխտ տաղասացներ. Վիեննա 1921, էջ 141—202:

© National Library of Armenia

էր եւ անեղալ. զի էր երկաթագիր եւ Խլեցի գրեալ։ Եւ առեալ ընկալաւ զսա պարոն Խսան պէյն ի ձեռանէ տէր Խաչատուրին. եւ եդ յիշատակ անջինջ... ի նորաշէն քաղաքն Զամօսցա ի յեկեղեցին փոխման սուրբ Աստուածածնին... Արդ... յիշեցէք... զդծող սորին զՀախնօ զդպիրն եւ զիս զանպիտան Յակոբ էրէցս որ զյիշատակարանս գրեցի։ ....

Կից կայ երկար ոտանաւոր մը, Յակոբ Թոխաթեցւոյ գրչէն Կանոնագրքի կարեւորութեան վրայ։

Ձեռագիր Լեմբերգի Համալսարանի Թ. 66։ Հմմտ. REA, VII, էջ 120—121։

2. Ես Յակոբ էրէցս Զամօսցոյին ստացա զսա ի թվին ՌԾԲ։

Թուղթք ԺԴ. Պաւղոսի (յամէ 1563). Ձեռագիր Լեմբերգի Համալսարանին, Թ. 55։ Հմմտ. REA, VII, էջ 129։

3. Փառք... Արդ գրեցաւ սուրբ Աւետարանս ի թուին ՌԾԲ (1603)... (ձեռամբ Ղազար եպիսկոպոսի Թոխաթեցւոյ)։ Եւ ի ժամանակիս յայսմիկ որ էր հայրապետն եւ առաջնորդն տէր Մելքիսէթ կաթողիկոսն. եւ ի թագաւորութեան քրիստոնէ(է)ից Զիկմունդին եւ գանձէրերին իւրոյ Յովհաննէս իշխաններին, ի քաղաքիս յայս Գանձէրերին որ ի Զամօսքի. ընդ հովանեաւ տիրամայրն ամէն օրհնեալ սրբոյհոյ Աստուածածնին... եւ սրբասէր քահանային սոցա որոյ է սպասաւոր սուրբ ուխտիցս տէր Յակոբ սրբասէր քահանային եւ իւր կենակցին Եաղութքային որ աշխատեցան ընդ անարժանութիւնս իմ, եթէ կերակրով եւ եթէ ըմպելիօք։ Աստուած վոխարէն յիւր արքայութիւնն տա՛ ամէն...։

Աւետարան. Ձեռագիր Լեմբերգի Համալսարանին, Թ. 48։ Հմմտ. REA, VII, էջ 150—151։

Կը յայտնուի այժմ նաեւ թէ Յակոբ 1635ին ուխտադնացութեամբ այցելած է Երուսաղէմ, անշուշտ ճանապարհին հանդիպելով նաեւ Եւդոկիա, իւր ծննդավայրը, իբր 40 տարի յետոյ։

Յակոբ Թոխաթեցւոյ տաղաչափական գրուածներու շարքին պէտք է յիշել նաեւ.

1. Նորին Յակոբայ ասացեալ խրատ վասն անձին իւրոյ։

Յակոբ Թոխաթցի մեղօք զառաձեալ,
ծերացեալ 'ւ ի դուռն մահու հասեալ...

Ձեռ. Էջմիածնի Պետ. Ձեռագրատան, Թ. 1636, թղ. 133 բ (ԺԸ. դար)։ Տունները կը կապէն՝ «ՅԱԿՈԲԻ»։

2. Նորին Յակոբի ասացեալ վասն սիրոյն Աստուծոյ եւ սրբոցն նորա։

Անեղանելին Աստուած, անսկիզբն եւ անճառական,
անքնին վերին զօրացն եւ մտաց մեր անհասական.

Ձեռ. Էջմ., Թ. 1636, թղ. 134 ա—137 բ։

3. Նորին Յակոբի ասացեալ ի վերայ Երուսաղէմի, յորժամ էր ինքն յԵրուսաղէմ ի թվին Հայոց ՌՁԴ (1635) ամին։

ՅԱստուծոյ շինեալ քաղաք պատուական...

Ձեռ. Էջմ. 1636, թղ. 137 բ—139 բ. Թ. 2394, թղ. 172 բ. եւ այլուր յաճախ[2]։

4. Ողբ ի վերայ Երկրին Օլախաց։

Լալով ասեմ ողբերգական...

Ողբս պահուած է Լեմբերգի Համալսարանի Թ. 63 հայերէն ձեռագրին մէջ, որ հաւաքածոյ մըն է զանազան մանր գրուածներու, այլ եւ այլ գրիչներէ։ F. Macler, որ ցուցակագրած է ձեռագիրս[3], նկատած չէ Ողբս, ըլլալով անխորագիր։ Բայց այս հատուածս միակ ուշագրաւ մասը կը կազմէ այն ձեռագրին։ Գրչութիւնը ենթադրել կու տայ թէ հատուածս սկզբնագիրն ըլլայ։

Ողբիս նիւթն է Մոլտաւիայի 1593—1595 տարիներու քաղաքական իրադարձութիւնները։ Որովհետեւ այս բազմավրդով ժամանակին նաեւ հայ գաղթականութիւնը տեսած է վիշտ, յատկապէս Եաշ շահաստանին մէջ, ուր կը գտնուէր Յակոբ Թոխաթեցի, աւելի իւր ազգին ցաւերը պատմել քան ժամանակակից քաղաքական կեանքին պատկերը նկարագրել նպատակ ունի բանաստեղծը։

Ինչպէս ինձ կը թուի, Ողբս Յակոբ Թոխաթեցւոյ գրական անդրանիկ աշխատութիւնն է, գրի առնուած իբր 17ամեայ պատանեակի մը գրչով, Կաֆացի Յովհաննէս եպիսկոպոսի մատնաւոր հրամանով։ Այս պատճառաւ ալ պէտք է անտեսել ինչ ինչ պակասութիւններ, յատկապէս տաղաչափութեան անկանոնութիւնները։ Արուեստէն աւելի պատմական բովանդակութիւնն է հոս հետաքրքրականը, որ պարզութեամբ ներկայացուած է։ Բովանդակութեան համառօտ վերլուծութիւնն է.

Մոլտաւիայի, այն է Օլախաց երկրին ժամանակակից Վոյվոտն է Ահարոն։ Սա կը բանակցի Ղազախներու հետ՝ միացեալ ուժով յարձակում մը գործել Թուրքերու վրայ, որոնց հարկատու էր Մոլտաւիա։ Ղազախները կը համաձայնին եւ առաջնորդութեամբ իրենց գլխաւորին կ'երթան ի Յոցոռա՝ Բրութ գետին եզերքը, Մոլտաւիայի սահմանին վրայ։ Բայց այժմ Ահարոն հրաժարած իր նախկին ծրագրէն հեծելազօրքով Ղազախներու դէմ կ'ելլէ խափանելու անոնց անցքը։ Երկակողմանի բանակցութիւնները կը յանգին թշնամութեան։ Ղազախները կը յարձակին Վոյվոտի վրայ, որուն բանակը անկարող դիմադրելու յարձակման կը դիմէ փախուստի։ Ղազախները անարգել կը յառաջանան Եաշ։ Շահաստանիս բնակչութիւնը գիտակից վերահաս վտանգին՝ փութացած էր ամբարել իւր կահն ու կարասին Հայոց եկեղեցին, որուն հովուապետն էր Յովհաննէս Կաֆացի, եւ տեղի տալ թշնամւոյն առջեւ։ 1393 Հոկտեմբեր 26ին, ուրբաթ օր, կը մտնեն Ղազախները Եաշ։ Կը խորտակեն եկեղեցւոյն երկաթեայ դռները եւ կ'աւարեն հոն ամբարուած մթերքը։ Անոնց հեռանալէն ետքը կը հասնի Ղազախ նոր ընչաքաղց զօրախումբ մը, որ տեսնելով քաղաքը արդէն կողոպտուած եւ եկեղեցին կապտուած առէ եւ աւարէ, իւր վրէժը կը լուծէ եպիսկոպոսէն, եկեղեցականութենէն եւ ժողովուրդէն։ Ս. Միւռոնը, եկեղեցական գրքերը, որոնք անտես եղած էին առաջին խմբին, կ'ինկնան երկրորդին ձեռքը։ Եպիսկոպոսը, եկեղեցականութիւնը եւ ժողովուրդը կը մերկացուին իրենց զգեստներէն. եւ կ'ենթարկուին սպառնալիքի միահաղոյն խողխողուելու։ Բայց ապա միայն հրկիզելով քաղաքը կը հեռանայ թշնամին։

Հակառակ այս ամօթալից պարտութեան կը ստիպուի Ահարոն դիմել միւսանգամ Ղազախներու օգնութեան։

Բարձրագոյն Դուռը նշանակած էր Մոլտաւիայի իշխան երիտասարդ մը՝ Բոգդան անուն, որ թրքական հարեմին մէջ ընդունած էր իսլամութիւնը։ Այս լուրին վրայ կը պարզէ Ահարոն ապստամբութեան դրօշը։ Կը յաջողի խորտակել Մուստաֆա փաշայի բանակը, որ կու գար սառուցեալ Դանուբի վրայէն հաստատելու նորընտիր Բոգդանը իւր իշխանութեան մէջ[4]։ Յակոբ Թոխաթեցի իւր իշխանութեան մէջ։ Յակոբ Թոխաթեցի իւր իշխանութեան մէջ։ Չ'ըներ այս մասին որ եւ է ակնարկութիւն, ինչպէս նաեւ չունի յիշատակութիւն Ծուրինչպէս նաեւ չունի յիշատակութիւն Ծուրի եւ Բուկարեստի անցքերու եւ առճովայի եւ Բուկարեստի անցքերու եւ առճովայի հասարակ ի Վալախիա Միքայէլ Վոյվոտի թուրքերու դէմ տարած յաղթութիւններու մասին։

Պանտարի առջեւ 2 ամիս զուր տեղ կը նստին մոլտաւական եւ Ղազախ միացեալ ոյժերը եւ առանց կարեւոր գործ տեսնելու կը վերադառնան Եաշ։

Այժմ Ըրզվան սպարապետը կը խորհի յինքն վտարել իշխանութիւնը։ Կը կալանաւորէ զԱհարոն եւ շղթայակապ կ'ուղարկէ Մաճարիստան եւ կը հռչակէ ինք զինքը Վոյվոտ (24 Ապրիլ 1595)։ Մինչեւ Օղոստոս 15 կը վարէ իշխանութիւնը, սաստիկ հարստահարելով ժողովուրդը։ Տառապող ժողովրդեան ադաղակները կը հասնին Լեհաց թագաւորին Սիկիսմունդ Գ.ին, որ կ'ուղարկէ իւր «Բանցելարն» (Յովհաննէս Զամոսքի) Մոլտաւիա, խաղաղելու երկրին վիճակը։ Ըրզվան կը դիմէ փախուստի դէպի Մաճարիստան։ Երկրին իշխանութիւնը կը յանձնուի Երեմիայի։ Լեհական բանակի ներկայութիւնը Մոլտաւիայի սահմաններու վրայ մտահոգուած կը պատճառէ Թաթարխանին՝ Ղազիթին կը պատճառէ Թաթարխանին՝ Ղազիթին կը պատճառէ Թաթարխանին՝ Ղազիթին գիրայինը. որ 1595 Հոկտ. 27ին առաջարկած էր Բարձրագոյն Դռան կալանաւորել եւ յանձնել Վալախիայի Միքայել եւ Մոլտաւիայի Ըրզվան Վոյվոտները՝ եթէ յանձն առնէ Սուլտանը այս երկիրներու իշխանութիւնը չնորհել Թաթար բէկերուն։ Բայց այս առաջարկութիւնը մերժած էր առանց պատասխանի[5]։ Այժմ վերահասու ըլլալով թէ Լեհաց թագաւորը չունի նուաճողական ձգտում, կը համաձայնի եղած կարգադրութեան նկատմամբ Երեմիայի։ Սեչով (Սուչաւա) էր նոր իշխանութեան նիստը։ Հազիւ անցած էր երկու ամիս, եւ ահա Ըրզվան կ'երեւայ Սեչովի դաշտերու վրայ՝ պահանջելու Երեմիայէն իշխանութիւնը յետս։ Կամենիցի պարոնին օգնութեամբ կը վանէ Երեմիա յարձակող թշնամին, կը խորտակէ եւ կը կալա-

[2] Հմմտ. Հանդ. Ամս. 1909, էջ 371—374, ուր հրատարակած եմ յանուն Յակոբ Կեսարացւոյ։ Հմմտ. նաեւ Հանդ. Ամս. 1930, էջ 368—369։

[3] F. Macler, Rapport sur une mission scientifique en Galicie et en Bukovine. Revue des Études arméniennes, VII (1927), p. 154--155.

[4] Hammer, Պատմ. Օսմանեան Պետութեան, Հատոր Բ., էջ 603—605։

[5] Hammer, անդ, էջ 605։

© National Library of Armenia

նաւորէ բռնաւորը, որ ապա ցից կը հանուի (1595, Դեկտ. 2, Գչ.)[6]:

Լեհաց, Թաթարաց եւ Տաճկաց քաղաքական պետերու համաձայնութեամբ Երեմիա կ'անուանուի վայվոտ եւ իւր զօրն վարչութեամբ կը խաղաղէ Մոլտաւիան:

Դէպքերը համաձայն են արտաքին աղբիւրներու: Մեզի համար կարեւոր նորութիւն է, որ 1593—1595 տարիներուն ունէինք Եաշ-պաղարի մէջ թիւ մը հայ դաղթականութեան, առանձին եպիսկոպոսով, որ յանուանէ ալ կը յիշատակուի:

Լսենք այժմ բանաստեղծին ողբերգական տողերը:

ՅԱԿՈԲԱՅ ԹՈՒԱԹԵՑՒՈՅ ՈՂԲ Ի ՎԵՐԱՅ ՕԼԱԽԱՅ ԵՐԿՐԻՆ

Լալով ասեմ ողբերգական
արտասուելով հառաչական
այս անողորմ բանքս որ եղան
ի մեր մեղացըն գործեցան:
Ի թվին Հայոց հազար ամին,
քառասուն 'ւ երեք աւելորդին.
չար վայվոտայ մի յայտնեցաւ,
այս Աւլախաց փոքրիկ երկրին:
Խորհուրդ արաւ ի իւր մտին
ասաց Ջարդեմ զազգըն տաճկին.
հրեշտակ առաքեաց Լոպոտին
Ղազախներուն գրկաւորին:
Ասաց եկէք ի յիմ երկրին,
հետ ձեզ երթամք վերայ Թուրքին.
որ պաշարեմք ըզքաղաքնին,
եւ տէր լինինք նոցա երկրին:
Ղազախներուն չուն պարոնին
որ Լոպոտայ անուանէին.
հանդոյ թուեցաւ յաչքս նորին,
շատ հեծելով եկան եկին:
Երբ յերկիրն Աւլախին մրտին,
ի Ցոցոռան եկան հասին.
Բանակեցան ամենեւին,
ի Ցոցոռայ ջրեզերին:
Քաղաք մի կայր որ խիստ չէն էր,
անուն նորա Եաշ պաղար էր.
պեղծ վայվոտան հօն բռնակէր.
Ցոցոռային նա ի մօտ էր:
Զար վայվոտան օլախ ազգին,
ասաց Զեմ կռուիր ես հետ թուրքին.
Ես կու կրռուիմ հետ Ղազախնին,
եւ կոտորեմ զամենեսին:
Զքաղքին հեծելն ժողովեցին.
Ղազախներուն դէմ գընացին.
դէմ յանդիման բանակեցին,
վէճն եւ ըգկռիւն բորբոքեցին:
Զայն անօրէն չուն Ղազախնին
ի պատերազմն չարժեցին.
դէմ յանդիման մարանչէին
չորեք շաբթի մինչ կէս օրին:
Թօփ ու զթիֆանկն երբ քարշեցին,
փախուստ առաւ ազգն Աւլախին.
ոմանք փախան մորին մտին,
եւ այլք գնացին ի բարձր լերին:
Երբ Եաշ պաղարըն լըցեցին,
գձիանն ի կառս լըծեցին,
ամենեքեան փախան գնացին
ի յերեսաց չար Ղազախին:
Պաղրկաններ այլ շատ կային,
որ փախչելու ճար չունէին.
ըստացըւած շատ ունէին,
տարան յեկեղեցին գրին:
Եկեղեցուն ամուր դռվին,
ներսի գիհաց ամրացուցին.
դուրսեւէ մեծ կըպղաք դրին
թէ բանալու ճար չի լինին:
Եպիսկոպոս Հայոց ազգին
Տէր Յովաննէս անուն բարին,
նա էր յերկրէն ի Կաֆային,
եկեալ քաղաք Եաշ պաղարին:
Աղէկ գրեանք կայր ի հետին,
Եւ սուրբ մեռոնն Էջմիածնին.
յեկեղեցուն մէջըն գրին,
ասոլճանին տակն էր տեղին:
Զար Ղազախներն երբ որ եկին,
մտին քաղաք Եաշ պաղարին.
հոկտեմբերի քսանեւվեցին,
ի յուրբաթու մէջաւրէին:
Ցեկեղեցինըն դիմեցին,
գերկաթէ դուռն կոտորեցին
բիւրք ի բիւրոց ի ներս մտին.
քան զչար դազան անապատին:
Ըստացուած խիստ շատ էին.
մինչ յառաստաղն հասեալ էին.
զամենայն ինչ առին գնացին
ոչինչ մընաց յեկեղեցին:

[6] Այս անցքերու մասին համառօտիւ կը տեղեկացնէ նաեւ Կամենիցի Ժամանակագիրը. հմմտ. Հ. Ղ. Ալիշան՝ Կամենից, էջ 60—61:
ԽՈՐԱԳԻՐՔ կը պակսի Զեռագրին մէջ:

35. Զ. ի դէմ: — 36. Զ. գկռիւրն: — 50. Զ. փախչու: — 51. Զ. ստացուած: — 59. Զ. Նայ: — 74. Զ. յառաստաղն:

Բայց մեռոնըն Էջմիածնին,
անարժան ձեռք հասեալ էին.
եպիսկոպոսն առեալ ձեռին,
եդիր վերայ ասոլճանին.
Ընկերք նոցա յետոյ եկին
նման թիւնալից չար աւձին.
յեկեղեցին ոչինչ գըտին.
ըզսուրբ մեռոնն եւ զգրեանքն առին:
Զեպիսկոպոսն կանգնած տեսին
խոնարհամիտ մաքուր հոգին,
երկու չար մարդ ըմբռնեցին
մերկիկ առին, չուլ հագուցին:
Սա միայն սուրբ էր ի յերկրին,
որպէս զՑովրն այն առաջին.
սա փորձեցաւ չար իշխանին
կայր մէջ գայլոց նըման գառին:
Զժողովուրդն եւ զիրիցնին
նման սրմին մերկացուցին.
յետոյ այլ չար խորհուրդ արին,
պիտի սըրով կոտորէին:
Խընամքն հասաւ Աստուածածնին
որ բարեխօս է միածնին.
եւ խափանեց զխորհուրդ նոցին,
որ ոչ եղաք սըրոյ բաժնին:
Անթիւ բազում չար գործեցին.
որ բերանով ասել չլինին.
յետոյ զքաղաքըն այրեցին,
այնպէս չարեաւք եկան գընացին:
Շաբաթ մի այլ վերայ անցին
պարոնն եկաւ Եաշ պաղարին.
անուամբն էր ինքն Ահարոնին
գործով նըման սադայէլին:
Ի միտ էած զրանքն առաջին
Ասաց կռուինք ի հետ Թուրքին.
Դարձեալ երեք զՂազախնին
գընաց կռուի ի հետ տաճկին:
Ի Պանտարին բերդին վերան
երկու ամիս ճակատեցան.
ամենեւին ոչինչ կալան
ապա դարձեալ ի Եաշն եկան:
Վազիր մ'ունէր չար վայվոտան
անուն նորա էր Ըրըզվան,
սիրելի էր քան զամենայն,
գլուխ էր հեծելին վերան:
Խրատ ետուր նա հեծելին,
որ ըզպարոնըն բռնեցին.
ըզձեռն եւ զոտն երկաթեցին,
այնպէս Մահառք ուղարկեցին:

92. Զ. ի մէջ: — 113. Զ. բերին:

Պեղծ Ըրըզվանն խմոր չարին,
նստաւ ի յաթոռ պարոնին.
թագաւորեաց ի վերայ երկրին
ապրիլ ամսոյ քսան եւ չորսին:
Զատկէն մինչ ի Յաստուածածին,
իշխան եղեալ աւլախ ազգին.
չատ աւերում արար երկրին,
որ ոչ է լեալ եւ ոչ լինին:
Երկիրն ամէնըն սարսէին
ի յահէ անհատատ թաթրին.
որպէս զնաւ ի մէջ ծովին
որ ի յալեացըն տատանին:
Այսքան բաներս ամենեւին
լըսեց զգալն Լեհաց երկրին.
հրրաման ետ քանցելարին
թէ գընա տես որպէս լինին:
Քանցելարըն քաջ եւ արին
մըտօք ճարտար գիտող բանին.
բիւր հեծելաւ եկան եկին
Աւլախ երկրին ի մօտ հասին:
Պեղծ Ըրըզվան իշխան չարին
թուղթ ուղարկեց Քանցէլարին.
ասաց Ծառայ եմ գոռելին,
եւս առաւել քոյոյ անձին:
Այս քանցէլար իշխան բարին,
պատասխանի ոչ ետ նըմին.
Լրտելեան կայր յեղբը երկրին,
չայտնէր զխորհուրդն ազգ մարդկային:
Ըրըզվանին եկան ասին.
Քանցէլարն է չարկամ քոյին,
պատասխանի ոչ ետ թղթին,
գու ճար արա վասն քո անձին:
Այս Ըրըզվան չար կենդանին
զկինն ուղարկեց յերկիր Մահմին.
եւ յետ նորա փախաւ ինքնին,
ի յերեսաց Քանցէլարին:
Քանցէլարն եւ հեծել նորին,
մտին յերկիրն ի Աւլախին.
Ի Ցոցոռայ գնացեալ հասին
Բանակեցան ի ջրեզերին:
Քանցէլարըն բարէնչան.
որ հալածեաց զչարն Ըրըզվան,
պարոն եդիր զերեմիան,
որ է արժան պարոնութեան:
Ամիս մըն ալ վերայ անցին,
անթիւ հազար թաթար եկին.

146. Զ. թուղ: — 151. Զ. յերկրին: — 154. Զ. թէ (քանցէլարն): — 155. Զ. թղտին: — 156. Զ. արայ: — 158. Զ. երկիր:

© National Library of Armenia

ի Աւլախաց յերկիր մըտին.
զէմ յանդիման Քանցէլարին։
Քանցէլարն էր բարի Իշխան.
թուղթ ուղարկեց ի Թաթրին խան
Զենք, ասաց, մեք ձեզ հետ չարկամ,
վաղուց հետէ եմք բարեկամ։
Թաթարն ասաց Քանցէլարին,
թէ Լենինցի հրաման քոյին,
զինչ բան որ քեզ հաճոյացին
ամենեւին կատարեսցին։
Զերեմիան հաստատեցին
իշխան եղեալ վերայ երկրին.
նստեալ քաղաքն ի Սէչովին.
Աթոռ է հին ժամանակին։
Այն շատ հեծեալն Թաթար խանին
ամէն դարձան իւրեանց երկրին.
ապա եւ Քանցէլարն ինքնին,
իւր հեծելան ելան գնացին։
Երկու ամիս վերայ անցին
չար Ըրըզվանն ելաւ կրկին.
թուղթ ուղարկեց Երեմիին,
ասաց՝ կու գամ ի վրայ քոյին։
Մեծ վոյվոտան օլախ ազգին,
Երեր զպարոն կոմէնիցին
հեծեալ բազում ժողովեցին,
ի պատերազմ պատրաստեցին։
Պեղծն Ըրըզվան եւ զօրք նորին
եկեալ ի դաշտ Սէչով քաղքին,
Սոքա ելեալ ի զէմ գնացին,
ի պատերազմն դիմեցին։
Դեկտեմբեր ամսոյ երկրորդին
Երեքշաբթի վաղվենէքին,
մինչ երեք ժամ կոիւ արին,
չորրորդ ժամուն կոտորեցին։
Զօրք եւ հեծեալ Ըրըզվանին
փախուստ տուին ամենեւին.
սոքա զհետ հալածէին,
որ եւ հասեալ սպանանէին։
Եւ զԸրըզվանն բռնեցին,
Բերին առջեւ Երեմիին,
հրաման տուեալ ցիցն զարկին,
գնաց ի փառս սատանային։
Հրամանաւն գոռելին
Միջնորդութեամբ Թաթար խանին
Ըստամբաւլն սանչախ բերին
Երեմիա վոյվոտ արին։

Խաղաղութիւն եղեւ երկրին,
բարեխօսութեամբ սուրբ կուսին.
անխռով կենայ ամենեւին
մինչեւ կրկին գալ միածնին։
Այս ամենայն բանքս որ եղան,
ի մեր մեղացն գործեցան.
աղօթեցէք դուք անխափան,
որ ամէն չար բարի դառնան։
Տէր Յովաննէսն Կաֆացի,
եպիսկոպոս սուրբ եւ արհի,
անփորձ կենայ ինքն յաշխարհի,
հրաման ետ որ զբանքս ասի։
Եպիսկոպոսն սուրբ հոգի,
ես անարժան հող եւ փոշի,
զիս ձեռնադրեաց ի յայսմ երկրի,
չորս աստիճան կարդ զրպիրի։
Ես անպիտան մեղօք լի,
որ եմ զարիպ ի յայսմ երկրի,
Յակոբ անուն պարսաւելի,
ի քաղաքէն եմ Թոխաթի։

Հրտ. Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

ԱՂԵՔՍԱՆԴՐ ՄԱՆԹԱՇԵՆՑ

ՄԵԾ ՎԱՇԱՌԱԿԱՆՆ ԵՒ ԲԱՐԵԳՈՐԾԸ

—

Յիշողութիւններ՝ իր մահուան 20 ամեակի առթիւ։

(Վերջ։)

Ժ.

Աղ. Մանթաշեանց իր հօր միակ արու զաւակն էր. մի քոյր միայն ունէր, որ ամուսնացել էր Թիֆլիսցի Թոմաս Միրիմանեանցի հետ, եւ երկու որդի ունեցել, Աղեքսանդր եւ Յովհաննէս [1]։

[1] Մեծը Աղեքսանդրը՝ «Թիֆլիսի Առեւտրական բանկի» գանձապահն էր եւ ապա վարիչը դարձաւ։ Իսկ կրտսերը՝ Յովհաննէս՝ (ռուսական ձեւով — Իվան Ֆոմիչ Միրիմանով) իրաւաբան էր եւ իմ մօտիկ ընկերս։ Ռուսական բոլշեվիկեան մեծ Յեղափոխութեան ժամանակ նա զրկուեց իր ամբողջ ունեցածից եւ յետին չքաւորութեան մէջ մնաց։ Մենք միեւնոյն պայմանների մէջ էինք ապրում Պեսերբուրգում։ Իվան Ֆոմիչ՝ տկարակազմ լինելով չդիմացաւ սովին եւ այլ զրկանքներին եւ սնունդի նուազութիւնից

Մանթաշեանց ամուսնացել էր Թիֆլիսցի մի հայ օրիորդի՝ Դարեա Թոմամշեանի հետ եւ ունեցել 8 զաւակ, 4 մանչ եւ 4 աղջիկ։ Մանչերն են՝ իրենց աւագութեան կարգով — Յովհաննէս, Լեւոն, Յովսէփ եւ Գէորգ. իսկ աղջիկները՝ Աննա, Նադէժդա (Յուսիկ), Վառվառա եւ Թամարա։ Աղջիկները բոլորն էլ ամուսնացած են Մանթաշեանցի կենդանութեան ժամանակ [2]։

Այս ութն էլ ողջ են այսօր։

Աղ. Մանթաշեանց զուարթ բնաւորութիւն ունէր եւ իրնէ լաւատես էր, ինչպէս լինում են առհասարակ բոլոր արիւնային կազմուածքով (sanguin) մարդիկ։ Նա զուարճասէր էր, ընկերասէր էր եւ ինչպէս Թիֆլիսցիք ասում են, սիրում էր «քէֆ (քէյֆ) անել»։ Բախտը գրեթէ անընդհատ ժպտել է նրան, ինչպէս գործի, նոյնպէս եւ ընտանեկան կեանքի մէջ։ Նա վիշտ չէր տեսել։ Իր ամենամեծ ցաւը հօրը մահն էր եղած, որին սիրում էր իր ամբողջ ոգով։ Առաջին կսկիծն, որ այնուհետեւ զգացած է, իր կնոջ մահուան առթիւ է եղած։

Տիկին Մանթաշեանց վերջին տարիները առապում էր չաքարախտով։ Իրրեւ հարուստ եւ իր առողջութեանը լաւ խնամք տարուստ եւ իր կնոջ մի միջոց չէր խնայում իր խախտուած առողջութիւնը վերականգնելու։ Երբ Թիֆլիսում հնարաւոր չեղաւ այդ անել, նա իր ընտանեկան հայ բժշկին հետն առած տեղափոխուեց Ֆրանկֆուրտ Մ. ի վրայ, ուր մի մասնագէտ բժիշկ խնամում էր նրան։ Ամէն բժշկական միջոց անօգուտ հանդիսացաւ եւ նա այնտեղ էլ վախճանուեց 1910ին։ Մարմինը բերին Թիֆլիս։ Տիկին Մանթաշեանցի յուղարկաւորութեան հանդէսը փայլուն ապացոյց եղաւ այն մեծ եւ անկեղծ ժողովրդականութեան, որ Մանթաշեանց վայելում էր իր հայրենիքում։ Ամբողջ քաղաքը ողբդուած էր։ Տիկին Մանթաշեանցի յուղարկաւորութեանը բոլոր ազգային, քաղաքային եւ հասարակական հիմնարկութիւնները մասնակցում էին պատգամաւորութիւններով եւ ծաղկեպսակներով։

Մանթաշեանց սաստիկ զգածուած էր իր նկատմամբ ցոյց տրուած այս ընդհանուր ժողովրդական յարգանքից եւ համակրանքից։ Բայց իր կնոջ մահից յետոյ նա ընկճուած էր եւ մելամաղձոտ դարձաւ։ Այս ընկճումն ունէր իր հոգեբանական պատճառը։ Մանթաշեանցի հայրը վախճանուել էր իր կնոջ, այսինքն Մանթաշեանցի մօր մահուանից մի տարի վերջը։ Այս հիմն վրայ Մանթաշեանց այն նախազգացումն ունէր թէ ինքն էլ նոյնպէս իր կնոջից մի տարի յետոյ մեռնելու է...։ Նրա յաղթանդամ կազմուածքը սկսել էր արագօրէն տկարանալ։ Մանթաշեանց էլ վաղուց տառապում էր երիկամունքի քարի հիւանդութիւնից։ Պարիսում նա մի անգամ բժշկական լուրջ գործողութեան ենթարկուեց, որ յաջող վախճան ունեցաւ. այնու-

---

ուժասպառ, փողոցում ինկաւ եւ հիւանդանոց տարուելով 3 օր վերջը վախճանուեց, հետեւելով այս չաւդում իրեն նման բիրաւորներին...։ Վերին աստիճանի մաքուր եւ բարեխիղճ անձնաւորութիւն էր։ Նրա մահուանից 10 օր յառաջ մենք դերեզման էինք առաջնորդել մեր մի ուրիշ ընկերին, Թիֆլիսցի բժշկապետ Աղեքսանդր Օրդուխանեանցին, որ նոյնպէս տիրող պայմանների հետեւութեամբ հիւանդացել ու 2 օր յետոյ մեռել էր։

[2] Մանթաշեանցի 4 փեսաներն էլ հասարակական դիրք ունեցող յայտնի անձեր են, որոնց լաւ եմ ճանաչում, ուստի հարկ եմ համարում մի քանի խօսք ասել նրանց մասին էլ.

1. Մեծ աղջիկն Աննայի ամուսինն է՝ Բարսեղ Ղորղանեան (ռուսական ձեւով՝ Վասիլի Դաւիդիչ Կորգանով) բնիկ Թիֆլիսցի։ Զինուորական հարիւրապետի աստիճան ունէր երբ ամուսնացաւ։ Բայց զինուորականութիւնից աւելի զեղարուեստի սէր ունենալով թողեց զինուորականութիւնը, ընտրեր երաժիշտ. ունի ռուսերէն լեզուով շատ կարեւոր հեղինակութիւններ նշանաւոր եւրոպական երաժիշտների մասին։ Նուազած է Նիկոլա Բ. կայսեր առջեւ, երբ սա թագաժառանգ ժամանակ Կովկաս էր եկել. իրրեւ յիշատակ ստացել էր Նիկոլայի լուսանկարն իր սեպհական մակագրութեամբ։ 1900ին հիմնեց Թիֆլիսում եւ մի քանի տարի հրատարակեց Кавказскій Вѣстник (Կովկասեան Հմայաւորը) անունով ռուսերէն ամսագիրը՝ գրական եւ զեղարուեստական բովանդակութեամբ։ Պ. Ղորղանեան, Թիֆլիսի իր տան մէջ, զլխաւորաբար զեղարուեստի ճիւղերի վերաբերեալ հազարաւոր հատորներից բաղկացած ճոխ մատենադարան ունէր։ Երբ Հայաստան ինքնավարութիւն ձեռք բերաւ, իր մատենադարանը ամբողջապէս նուիրեց Խորհրդ. Հայաստանին եւ ինք էլ տեղափոխուեց Երեւան։

2. Երկրորդ փեսան է՝ Յովսէփ Տիգրանեան, ալեքսանդրոպոլցի, նոյնպէս զինուորական հարիւրապետ էր, երբ ամուսնացաւ։ 1909ին, քաղաքալուսէր էր իր ծննդավայր Ալեքսանդրոպոլ քաղաքի (այժմ Լենինական)։ Վերջին 1914—1918 պատերազմի ժամանակ ռուսական բանակի զնդապետ էր եւ Էրզրումի դրամման մասնակցած է թնդանօթաձիգ զօրքի հրամանատարի աստիճանով։ Յետոյ տեղափոխուած է Երեւան։

3. Երրորդն է՝ Լեւոն Եւանգուլեանց, հմուտ իրաւաբան։ Թիֆլիսի արքունի դատարանի դատախազ էր (procureur) եւ յետոյ նշանակուեց Փոխարքայ կոմս Վորոնցով-Դաշկովի մօտ «առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ», իրրեւ դատական քննիչ։ Այժմ վախճանած է։

4. Կրտսեր աղջկան ամուսինն է բժշկապետ Գէորգ Ամբարդանեանց. հմուտ բժիշկ էր եւ այդ ասպարէզում էլ մնում է։ Այժմ Պարիս է բնակւում։